Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՄԻ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ**

**1**

Կա Երևանում մի հիանալի անկյուն — ոչ ոք չգիտե դրա մասին: Եվ ո՞վ կարող է իմանալ: Նամակաբե՞րը: Բայց դրա բնակիչները համարյա երբեք նամակներ չեն ստանում, իսկ եթե երբեմն ստանում են էլ, ապա փոստային բաժանմունքից, ցպահանջ, որովհետև նրանց տունը դեռ հասցե չունի: Այն օրերին, երբ ընտանիքն սպասում է իր որևէ հեռավոր ազգականին գրած նամակի պատասխանին, աղջիկն աշխատանքից դուրս գալիս անցնում է փոստ և ստանում:

Էլ ո՞վ կարող է իմանալ այդ անկյան մասին: Էլեկտրոցանցի աշխատակի՞ցը, ֆինբաժնի գործակա՞լը, տեղամասի միլիցիոնե՞րը: Բայց ընտանիքն ամենայն ճշտակատարությամբ մուծում է լույսի վճարն ու տան տուրքը, և տարօրինակ էլ կլիներ, եթե չվարվեր այդպես, քանի որ նրանց աղջիկը հենց ինքն էլ ֆինբաժնի աշխատող է:

Գալով տեղամասի միլիցիոներին, ապա նա ոչինչ չունի անելու այդ տանը, որովհետև գիտե, որ այնտեղ ապրում են միանգամայն վստահելի քաղաքացիներ, որոնք չեն ունենում ոչ միայն չգրանցված, այլև գրանցված հյուրեր: Ընտանիքի տղամարդն ու միլիցիոները համարյա բարեկամներ են, որովհետև երբ և որտեղ էլ հանդիպեն միմյանց, բարևում են՝ ձեռք ձեռքի տալով և անպայման փոխանակելով մի քանի խոսք: Նույնը չի կարելի ասել տանտիրուհու և միլիցիոների փոխհարաբերությունների մասին: Ճիշտ է, վերջինս այդ տիկնոջ հանդեպ ևս ունի միանգամայն դրական վերաբերմունք՝ որպես ոչ մի կանոն չխախտող քաղաքացուհու, բայց կինը, որպես մթերային շուկայի մասնավոր վաճառորդուհի, համարյա բնազդական հակակրանք է զգում դեպի բոլոր միլիցիոներները: Աշխարհին է հայտնի, թե ինչ մարդիկ են դրանք: Կարող են մոտենալ վաճառասեղանիդ և պատահաբար վար ընկած մի լիկած վարունգի համար նկատողություն անել քեզ մաքրություն չպահպանելու մեջ, նկատողություն անել և նույնիսկ տուգանել:

Ճիշտ և ճիշտ այդ տան նման, ոչ ոք չգիտե նաև դրա բնակիչներին: Եվ, իսկապես, ո՞վ է ճանաչում, օրինակ, ընտանիքի տղամարդուն՝ Գարսևան Աբգարյանին: Ամեն օր, առանց չափազանցության, հարյուրավոր մարդիկ են անցնում նրա մոտով, անցնում են՝ բառի ուղղակի իմաստով, և բոլորն էլ համարյա առանց ուշադրություն դարձնելու նրա վրա, միայն ցույց տալով նրան իրենց անցագրերը, որովհետև նա դռնապահակ է, իսկ նրանք՝ կարի գործարանի բանվորուհիներ և բանվորներ: Նա ոչ երիտասարդ է, որ աղջիկները ժպտան նրան, ոչ էլ անգամ միջին տարիքի, որ գոնե կանայք կատարեն դա: Նա արդեն հիսունհինգ տարեկան է և ունի դրանից էլ ավելի մեծի տեսք: Կանգ չեն առնում նրա մոտ նաև տղամարդիկ, որովհետև, նախ և առաջ, չի կարելի կանգ առնել անցատնակի նեղ միջանցքում և խանգարել մյուսներին, երկրորդ՝ բոլորն շտապում են գործի կամ տուն, և, երրորդ՝ Գարսևանն ինքն էլ թույլ չի տա որևէ տնային-բարեկամական վերաբերմունք՝ պաշտոնական ժամերին: Իր բարեհոգի դեմքին տալով խիստ արտահայտություն, որը մի քիչ նույնիսկ ծիծաղելի է դարձնում նրան, նա, առանց պատասխանելու հատուկենտ բարևներին, ծուռ-ծուռ նայում է անցագրերին և միայն մի բառ է կրկնում՝ «անցիր»:

Դիրեկտորի մոտ Գարսևանը լինում է տարեկան ընդամենը երկու անգամ, և երկու անգամին էլ ասում է նույն բանը՝ «ընկեր Հովսեփյան, էն իքը...»: Ամառվա «էն իքը» նշանակում է, որ նա

արձակուրդի համար է խնդրում, իսկ ձմեռվա «էն իքը»՝ որ հարկավոր է վառարան դնել և փայտ դուրս գրել անցատնակի համար: Տարիների ընթացքում շատ դիրեկտորներ են փոխվել, Գարսևանն սկզբում խառնում էր նրանց ազգանունները, ապա, հեշտության համար, բոլորին սկսեց անվանել ութերորդ դիրեկտորի ազգանունով՝ Հովսեփյան, որը, չգիտես ինչու, ամուր էր տպավորվել նրա հիշողության մեջ:

Հաշվապահության հետ նույնպես, նա համարյա երբեք գործ չէր ունենում, և միայն գանձապահն էր, որի մոտ Գարսևանը լինում էր ամսական երկու անգամ և, ստորագրելով ռոճկացուցակի մեջ, ստանում էր իր աշխատավարձը: Բայց այս անգամ արդեն, շտապողն ինքը գանձապահն էր, որն առանց ավելորդ խոսք ասելու, շարունակ կրկնում էր՝ «հետևյալը»:

Իսկ ո՞վ էր ճանաչում Գարսևանի կնոջը՝ Արևհատին: Վաղ առավոտյան նա գնում էր քաղաքի կենտրոնական շուկա՝ նախապես մտնելով շուկայի մոտ գտնվող ինչ-որ տուն և այնտեղից դուրս գալով՝ մի ծանր դույլ ձեռքին: Շուկայի ծածկերից մեկի տակ գրավելով վաղուց ի վեր իրեն հատկացված տեղը, նա դույլը դնում էր վաճառասեղանի վրա, դույլի առաջ դնում էր տետրակի մի թերթ, և դրա վրա, որպես ռեկլամ, դույլից ընտրովի վերցրած երկու ամենալավ թթու վարունգ: Քիչ հետո, երբ առաջին գնորդներից հետո դույլը մի քիչ կիսատվում էր, նա այժմ արդեն թեք էր դնում այն, և բոլորը կարող էին տեսնել ոչ միայն թթվաջրով կիսովին ծածկված վարունգը, այլև կանաչ լոբու պատիճները և այն կանաչին, որն անպայման դրվում է յուրաքանչյուր լավ թթվի մեջ: Այնուհետև արդեն, որքան էլ որ շատ լինեին գնորդներն օրվա ընթացքում, դույլն այլևս ոչ դատարկվում էր և ոչ էլ նույնիսկ ավելի կիսատվում: Բայց դեռ ոչ ոքի չէր հաջողվել տեսնել, թե երբ և որտեղից էր ավելացնում Արևհատը դույլի մեջ թթվի նորանոր պաշարներ: Որ մոտակա տներից մեկում դրված են նրա թթվի տակառները՝ դա կարելի էր միայն կռահել: Երբ շուկայի վարիչը երբեմն-երբեմն ուզում էր ավելացնել Արևհատից գանձվող տուրքի չափը, կինը վրդովվում էր և բարձրագոչ նախատինքով հարցնում, թե ինչպե՞ս կարելի է մի դույլ, ընդամենը մի դույլ թթու վարունգ վաճառելու համար գանձել այդպիսի մեծ տուրք… Շուկայի վարիչը հակաճառում էր նրան, հայտարարում, որ Արևհատն ամենաառաջին թթվավաճառն է շուկայում և անշուշտ վաճառում է օրական ոչ պակաս, քան հինգ-տասը դույլ, բայց նա չէր կարողանում ապացույցներով հաստատել դա, և տուրքի չափը միշտ մնում էր նույնը:

Արևհատը, իրոք որ, ամենակայուն թթվավաճառն էր ամբողջ շուկայում: Նրա շուրջը գտնվող թթու վարունգ և պոմիդոր վաճառողներն ամեն օր փոփոխվում էին՝ չկարողանալով դիմանալ նրա մրցակցությանը: Արևհատն իր թթվի մեջ խտացրել էր հայ ժողովրդի դարերով կուտակած ամբողջ ճարտարությունն այդ բնագավառում: Ու թեև նրա վարունգն ամենաթանկն էր ամբողջ շարքի մեջ, բայց համարյա բոլորը նախընտրում էին գնել նրանից: Մյուսները, մի կերպ վաճառելով իրենց ունեցածը, հետևյալ օրը կամ չէին հայտնվում այդ շուկայում, կամ աշխատում էին տեղ գրավել Արևհատից հեռու:

Կարող էր թվալ, թե շատերն էին ճանաչում նրան: Բայց ի՞նչ ճանաչել էր դա: «Ամենալավ թթու վաճառող կինը»... Բայց ո՞վ գիտեր, թե ով էր նա, ինչ էր նա: Քառասուներկու տարեկան, միջահասակ, չաղ, կարմիր դեմքով — հենց ամբողջ դեմքով, ոչ միայն այտերով, այլև ճակատով, քթով, կզակով, կարծես արևն էր այրել և կիսատ թողել իր գործը՝ առանց թխացնելու մաշկը, որից այնքան փչացել էր նրա դեմքը, որը, ճիշտն ասած, նրա այդ տարիքումն էլ դեռ բավական գեղեցիկ էր՝ չնայած այդ կարմրությանը և ցասկոտ արտահայտությանը՝ գնորդների հետ վիճելու և սակարկելու պատրաստ: Ահա սա էր Արևհատը բոլորի համար:

Իսկ ո՞վ էր ճանաչում Աբգարյանների աղջկան՝ Լիային: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ահա հինգ տարի էր, ինչ նա աշխատում էր ֆինբաժնի մուտքի դրամարկղներից մեկում: Դրամարկղը տեղավորված էր Աբովյանի վրա բացվող մի նեղլիկ փողոցի միհարկանի շենքում, որն առաջներում, անշուշտ, մասնավոր կրպակ էր եղել, ուներ ապակեպատ մի մեծ փեղկ և մի փոքրիկ դուռ:

Դրամարկղն ուներ ընդամենը երեք աշխատակցուհի՝ Լիան, Անժիկը, որոնք գործառնություններն էին կատարում, և  գանձապահը՝ հիսնամյա Հայկանուշ Հայկովնան, որը տասնյակ տարիներ փորձելով ամուսնանալ և ինչ-ինչ հանգամանքների բերումով չկարողանալով կատարել այդ, հիմա լցված էր մեծ վիրավորանքով դեպի արական սեռը և հպարտությամբ ասում էր բոլորին, որ «ոչ մի տղամարդու դեռևս չի հաջողվել նույնիսկ մատով դիպչել նրան»: Բնական է, որ դա առավել ևս անհնար էր ներկայումս:

Դրամարկղում մուծումներ կատարողների թիվն այնքան էլ մեծ չէր, ընդ որում, ինչպես ամեն հիմնարկ, դա ևս ուներ իր եռուն ժամերը և համեմատաբար ազատ ժամերը, երբ կարելի էր շունչ քաշել և նույնիսկ զբաղվել կողմնակի գործով կամ մասնավոր խոսակցությամբ:

Դրամարկղի այցելուները մեծ մասամբ տնային տնտեսուհիներ էին և տատիկներ: Տան աշխատողները, գործի գնալուց առաջ, սեղանների վրա թողնում էին մուծումների գրքույկներն ու դրամը և պատվիրում տանը մնացածներին՝ օրվա ընթացքում տանել և մուծել: Իհարկե, ինչպես ամեն աշխատանք, Լիայի, Անժիկի և Հայկանուշ Հայկովնայի աշխատանքը նույնպես ուներ իր դժվարությունները: Տնային տնտեսուհիներից շատերը խնդրում էին զեղչել այն տույժը, որը գանձվում էր մուծումներն ուշացնելու համար: Ոմանք նույնիսկ սկսում էին երկար-բարակ պատմել, թե ինչ պատճառով են նրանք ստիպված եղել ուշացնել: Լիան և Անժիկը համբերատար բացատրում էին նրանց, որ իրենք ոչինչ անել չեն կարող: Երբեմն հարկ էր լինում ժամանակ կորցնել և երկար սակարկել:

Գալով տատիկներին, ապա նրանք կասկածով և մի քանի անգամ դրամի վերադարձիքը հաշվելուց հետո այնուամենայնիվ հայտարարում էին, որ «պակաս է»: Հայկանուշ Հայկովնան, ամեն անգամ զայրույթից ու վիրավորանքից կարմրելով, բայց ամեն անգամ էլ իրեն զսպելով, հանգիստ ետ էր վերցնում դրամը, մեկ առ մեկ հաշվում պառավի աչքի առաջ, համոզում և վերադարձնում:

Ֆինբաժնի երիտասարդ վերահսկիչ Հենրիկը, որը երբեմն-երբեմն տեսչական այցելություններ էր կատարում նաև այդ դրամարկղը, գիտեր, որ կան այնպիսի անհասկացող այցելուներ, որոնք կարող են հավասարակշռությունից հանել ամենահանգիստ աշխատակցուհուն անգամ: Եվ որպեսզի այդպիսի բան չպատահի, նա անհրաժեշտ էր համարել դրամարկղի պատերից մեկի վրա փակցնել նախազգուշացում կատարող պլակատ: Բայց քանի որ ֆինբաժնի աշխատակիցներին վերաբերող պլակատներ գոյություն չունեն, նա ստիպված էր եղել վերցնել առևտրական ցանցի համար հրատարակվածներից: Այնտեղ նկարված էին կին ու տղամարդ՝ կշեռքով իրարից անջատված, և դրված էր՝ «Վաճառորդ, եղիր քաղաքավարի՝ գնորդի հետ»: Ոչինչ, հասկացողը կհասկանա:

Եվ այսպես, ո՞վ էր Լիան դրամարկղի այցելուների համար, ովքե՞ր էին մյուս երկու աշխատակցուհիները: Երբ երկու հարևանուհիներ միասին էին գալիս դրամարկղ, ապա ճանապարհին նրանք երբեմն մտքեր էին փոխանակում դրա աշխատակցուհիների մասին: Լիան՝ դա «լուսամուտին մոտիկ նստած աղջիկն» էր, որն ավելի լուրջ էր և բարի, ուրեմն պետք էր նրան ներկայացնել գրքույկը: Իսկ Անժիկը «լուսամուտից հեռու նստած աղջիկն» էր, որը շարունակ քթի տակ երգում էր կամ նույնիսկ ինչ-որ բաներ պատմում ու ծիծաղում, և կարող էր սխալ

գրանցումներ կատարել, ուստի միայն այն դեպքում պետք էր դիմել նրան, երբ Լիայի մոտ հերթ էր լինում:

Ուրիշ այցելուներ աղջիկների տեղադրությունը հաշվում էին ոչ թե լուսամուտի կողմից, այլ գանձապահուհու՝ «այն պառավ կնոջ»: Աստված չաներ, որ Հայկանուշ Հայկովնան լսեր այդ որակումը: Ի՞նչ «պառավ» և նույնիսկ ի՞նչ «կին», երբ նա, իրենց փոքրիկ կոլեկտիվի մասին խոսելիս, միշտ ասում էր՝ «մենք, աղջիկներս»...

Ամեն օր, աշխատանքային օրվա վերջին, գալիս էր հավաքիչ գանձապահը և վերցնում դրամարկղում կուտակված դրամը: Երբեմն նա հայտնում էր աշխատակցուհիներին, որ այդ երեկոյան ռայֆինբաժնի շենքում տեղի էր ունենալու տեղկոմի կամ մի այլ ժողով, ուրեմն՝ չուշանալ: Լիան վազում էր դուրս, Աբովյանի անկյան հեռախոս-ավտոմատից զանգ էր տալիս ֆինբաժին և թույլտվություն խնդրում ներկա չգտնվելու, որովհետև, ինչպես հայտնի է, նա ապրում է քաղաքի ծայրին և վախենում է ուշ ժամին, մթնով, վերադառնալ տուն: Համարյա միշտ նրա խնդիրը հարգում էին, իսկ երբ դա հնարավոր չէր լինում, նա ճաշում էր քաղաքում, իսկ ժողովից հետո Անժիկի հետ գնում նրանց տուն և գիշերում այնտեղ: Եվ որպեսզի ծնողները չանհանգստանային, նույն ավտոմատից նա զանգ էր տալիս կարի գործարանի անցատնակ և հորը հայտնում ժողովի մասին:

Թեև մուտքի դրամարկղի երեք աշխատակցուհիների ժամացույցներն էլ աշխատում էին նախանձելի ճշտությամբ և համերաշխությամբ, բայց աշխատանքային օրն ավարտված էր համարվում միայն ըստ Հայկանուշ Հայկովնայի ժամացույցի: Երկու աղջիկները փակում էին իրենց գրասեղանների դարակները՝ կնիքները նախապես տալով երրորդ աղջկան, երրորդ աղջիկը փակում էր երկաթե փոքրիկ դրամարկղը, և երեքն էլ սկսում էին թեթևակի սանրվել՝ առանց, սակայն, լվացվելու, որովհետև, նախ, անհարմար էր ամեն օր, տարիներ շարունակ, ջուր խնդրել հարևան բակի բնակիչներից, և, երկրորդ, հարկավոր էր գնալ տուն, լվացվել սապոնով, երկար ու մանրամասն, որովհետև, ինչպես հայտնի է աշխարհի ստեղծագործությունից ի վեր, դեռ չի ծնվել մի աղջիկ, որը գրի թեկուզ երկու բառ և չթանաքոտի իր մատները:

Այն օրերին, երբ հավաքիչ գանձապահը գալիս էր ամենավերջին բոպեներին, նա դուրս էր գալիս աշխատակցուհիների հետ միաժամանակ: Հայկանուշ Հայկովնան մռայլվում էր և հիմնարկի դուռը փակելիս դիտմամբ դանդաղում, որպեսզի, աստված չանի, դեռ իրեն երիտասարդ ձևացնող այդ քառասունհինգ տարեկան տղամարդը հանկարծ չուղեկցի նրան: Չէ՞ որ ոչ մի տղամարդու դեռևս չէր հաջողվել ուղեկցել նրան: Բայց հավաքիչ գանձապահը, ըստ Հայկանուշ Հայկովնայի ենթադրության, գուշակելով նրա անբարյացակամ տրամադրությունը, իսկույն ցտեսություն էր ասում բոլորին և հեռանում՝ ձևացնելով, թե շտապում է տեղ հասցնել դրամը: Եվ միայն այդտեղ, Հայկանուշ Հայկուվնայի ուղեղի մի ետ ընկած անկյունում ծագում էր այն միտքը, որ, իրոք, ինչպե՞ս կարող էր գանձապահն ունենալ նրան ուղեկցելու մտադրություն, երբ Աբովյանի անկյունում նրան էր սպասում, «վիլլիս» մեքենան, որի մեջ՝ մյուս դրամարկղներից հավաքած դրամը և ուղեկցող միլիցիոները: Իսկ նույն ուղեղի մի այլ ետ ընկած անկյունում ծագում էր այն ակամա ափսոսանքը, որ «վիլլիսն» սպասում էր այնտեղ: Ի՞նչ վատ բան, եթե նա ուղեկցեր: Երբեք և ոչ մի տղամարդ չի ուղեկցել Հայկանուշ Հայկովնային: Կխոսակցեին դեսից-դենից կամ՝ չէին էլ խոսակցի, նա միայն կզգար հակառակ սեռի ներկայացուցչի ներկայությունն իր կողքին՝ թեկուզ աննպատակ, անհեռանկար, զուտ բարեկամական, բայց հաճելի: Բայց այդ սարսափելի միտքը չէր էլ համարձակվում գլուխ հանել իր հեռավոր բնից և ընկնել հիսնամյա աղջկա ցասկոտ հայացքի տակ:

Աբովյանի վրա երեք աշխատակցուհիները հրաժեշտ էին տալիս իրար և ցրվում զանազան կողմեր: Առաջինը հեռանում էր Հայկանուշ Հայկովնան: Իր մենակությամբ հպարտ, նա ցնցում էր գլուխը, դրան տալիս էր ինքնիշխան դիրք, և, առանց շուրջը նայելու, արագ քայլում:

Որ Հայկանուշ Հայկովնան մենակ էր գնում տուն՝ դա դեռ ոչինչ: Ցավալին այն էր, որ ոչ ոք չէր դիմավորում և ուղեկցում նաև Լիային ու Անժիկին, ոչ մի երիտասարդ ծանոթ, ոչ մի օր, ահա հինգ տարի շարունակ... Ուստի և, ամեն օր միմյանց հրաժեշտ տալիս նրանք մի քիչ շփոթված էին լինում և չէին նայում իրար, կարծես հանցավոր էին ինչ-որ բանում: Նրանք անհարմար էին զգում իրենց, որ երկուսն էլ երիտասարդ և բավական գեղեցիկ աղջիկներ, դեռ չունեին սիրած տղաներ, էլ չասենք՝ ամուսիններ...

Մի պահ անց, երբ Լիան, մնալով մենակ, քայլում էր Աբովյանով վեր, անհարմարության զգացումը նրա մոտ փոխարկվում էր վիրավորանքի հետ խառը վշտի: Մի՞թե նրան էլ էր սպասում Հայկանուշ Հայկովնայի ապագան... Մի՞թե նա ևս, իր դժբախտությունը ձևացնելով առաքինություն, պիտի հպարտանար նրանով, որ ոչ մի տղամարդու դեռևս չէր հաջողվել ժպտալ՝ նրան նայելիս...

Երկրորդական փողոցից հետո Աբովյանը՝ թվում էր արտակարգ կերպով եռուն: Ասենք՝ դա այդպես էլ էր, որովհետև, նախ, դա քաղաքի ամենագլխավոր փողոցն էր, երկրորդ, դա այն ժամն էր, երբ հիմնարկներից դուրս էին գալիս աշխատողները:

Թե փողոցով դեպի վեր և թե դեպի վար քայլում էին մարդիկ՝ շատ հաճախ զույգ-զույգ՝ տղամարդ-կին, տղա-աղջիկ... Ահա, օրինակ, այս աղջիկը: Ինչո՞վ է նա Լիայից ավելի լավ: Բայց քայլում է տղայի հետ և տես, թե ինչպե՞ս է տղան հոգ տանում նրան, թևանցուկ է արել և այնպես է տանում, կարծես ասֆալտը սառույց լինի, որի վրա աղջիկը կարող է ամեն րոպե սայթաքվել: Իսկ աղջիկը... Ճիշտն ասած, շատ լավիկն է անպիտանը: Եվ ի՜նչ լավ է ձևացնում, թե իբր այդ թևանցուկը կենսական նշանակություն ունի նրա համար, թե իբր առանց դրա նա չպիտի կարողանար անել ոչ մի քայլ...

Իսկ մի՞թե Լիան ինքն էլ լավը չէ և չի կարող նույնպես կոկետություն անել: Կարող է և այն էլ ինչպե՜ս: Բայց ո՞ւմ համար: Նա ոչ ոք չունի: Իսկ ինչո՞ւ...

Մի ժամանակ Լիան այդ հարցին պատասխանում էր նրանով, որ մեղավորն իր կյանքի հանգամանքներն են: Նա աշխատում է մի հիմնարկում, որտեղ չկա ոչ մի տղամարդ, գնում է տուն, որի շուրջը չկան հարևաններ: Հեռու ապրելու հետևանքով նա չափազանց քիչ է հաճախում թատրոն կամ այլ երեկույթներ: Էլ որտե՞ղ կարող են ծանոթանալ նրա հետ տղամարդիկ, սիրահարվել կամ ամուսնության առաջարկ անել. Մի՞թե փողոցում: Բայց փողոցային ծանոթությունները, համարյա առանց բացառության, լինում են ոչ լուրջ...

Իր մտքերի այդ կետում Լիան, հակառակ իր տխուր տրամադրության, ժպտում էր և հազիվ զսպում ծիծաղը, որովհետև հիշում էր մի զավեշտական դեպք: Սրանից մի երկու տարի առաջ նա նկատեց, որ ահա մի քանի օր է, ինչ մի չաղ և առողջ երիտասարդ, խիստ ծուռ սանրված գանգուր մազերով, Աբովյանի ամբողջ երկարությամբ հետևում է նրան և համալսարանի հին շենքի մոտերքը ետ մնում ու անհույս քայլերով վերադառնում: Լիան տեսնում էր, որ նա համեստ երիտասարդ էր, և բոլորվին դեմ չէր լինի, եթե ծանոթանար իր հետ, թեև, ճիշտն ասած, արտաքինով այնքան էլ դուրեկան չէր, մի տեսակ ոչ առնական էր, կնավարի չաղ: Բայց տղան ըստ երևույթին չէր էլ մտածում դիմելու որևէ գործնական քայլի, և մի քանի օր հետո նրա այդ աստիճան պարկեշտությունն սկսեց ջղայնացնել Լիային: Նա մի քանի անգամ, բավական շեշտակի և սիրալիր, նայեց տղային, բայց տղան դրանից ևս չսրտապնդվեց: Եվ հենց այն է, Լիան պատրաստ էր վերջնականապես

հիասթափվել նրանից երբ, վերջապես, մի օր, երիտասարդը հավաքեց իր ողջ քաջությունը և, մոտենալով աղջկան, հարցրեց.

— Ներեցեք, անծանոթ ընկերուհի... Կարելի՞ է ձեզ ուղեկցել...

Լիան նայեց առողջությունից տրաքվող, նրա լիքը երեսին, գեր և ամուր կազմվածքին՝ ձևացնելով, թե առաջին անգամն է տեսնում նրան, և անտարբեր շարժեց ուսերը.

— Խնդրեմ՝ եթե դա ձեզ հաճելի է։

— Հաճելի՞...— իսկույն կրկնեց տղան՝ մի քիչ սիրտ առած։— Մի՞թե դա այն բառն է, որն ամենաճիշտն է: Ես երջանիկ կլինեմ քայլել ձեզ հետ: Ահա երկու շաբաթ է, որ ես քայլում եմ ձեր հետքից...

Նրանք քայլեցին և Լիան սկսեց գուշակություններ անել, թե ով է այդ երիտասարդը: Ուսանո՞ղ: Բայց գուցե արդեն ավարտե՞լ է: Ուսուցի՞չ: Ոչ, ուսուցչի համար նա խիստ չաղ է և ամրակազմ: Տրակտորի՞ստ: Բայց քաղաքում տրակտորիստներ չեն լինում և, բացի դրանից, տղայի գործածած ոճերը «տրակտորիստական» չեն:

— Կարելի՞ է ձեր անունը...— հարցրեց երիտասարդը: Նրա ձայնը, թեկուզ և աղջկան դիմելու համար քնքույշ տոն վերցրած, առնական էր և հաճելի:

— Իմ անո՞ւնը... Իսկ ձեր ինչի՞ն է պետք իմ անունը,— սկսեց կոկետություն անել Լիան։— Մի՞թե ուղեկցելու համար դա անհրաժեշտ է:

— Դա անհրաժեշտ է ամեն պարագային,— հառաչեց տղան։— Անհրաժեշտ է՝ մենակության մեջ շշնջալու համար: Լսեցեք...

Տղայի վերջին բառից հետո տեղի ունեցավ մի այնպիսի բան, որ աղջիկը քիչ մնաց փոթկար անսպասելիությունից։ Նրա կրծքից նույնիսկ դուրս պրծավ ծիծաղի մի կարճ ծկլթոց՝ «հը՛», բայց Լիան մեծ ճիգով զսպեց իրեն, և ծիծաղը, կոկորդին հասած, գլորվեց ետ, իջավ վար՝ ցնցելու համար նրա փորը:

Եվ ինչպե՞ս չծիծաղել։ «Լսեցեք» բառից հետո երիտասարդի առնական ձայնն իսկույն կտրվեց և նրա առողջ կրծքից դուրս ծորաց կատվի նվոց։ Նա սկսեց արտասանել մի բանաստեղծություն, գուցե ի՞ր գրածը, ամեն տողի վերջը շեշտելով բռունցքի մի թարս հարվածով օդի մեջ.

Ձեր անո՛ւնը, ձեր անո՛ւնը,

Թող մտնի՛ իմ հոգու տո՛ւնը,

Թող անցնի՛ իմ հոգնությո՛ւնը,

Թող տանի՛ իմ հոգն ու թո՛ւյնը,

Օ՛, ասացե՛ք ձեր անո՛ւնը...

Լիան հանկարծ մի այնպիսի ատելություն զգաց դեպի այդ նվացող ատլետը, որ, խախտելով քաղաքավարության ամեն մի կանոն, ասաց նրան՝ իր հերթին կորցնելով իր աղջկային ձայնն ու տոնը և ընդօրինակելով ինչ-որ մեկին, կարծեմ՝ վերահսկիչ Հենրիկին.

— Չի՞ լինի ռադ լինես գնաս։

Տղան այնպիսի արագությամբ անհետացավ աչքից, որ աղջիկը չկարողացավ էլ տեսնել, թե ուր գնաց: Մնացյալ ամբողջ ճանապարհին Լիան քրքջում էր՝ այլևս անկարող զսպել իրեն: Ինչ կմտածեն անցորդները նրա մասին՝ իրենց գործն է:

Եվ ամեն անգամ, հիշելով այդ դեպքը, Լիան ժպտում էր, բայց տխուր, թախծոտ: Եվ այդպես, հինգ տարվա ընթացքում միայն այդ նվացող ատլետը՝ չհաշված Հենրիկին, որն առաջին տարում ուզում էր մտերմանալ նրա հետ և հաճախակի էր գալիս նրանց դրամարկղը, բայց շուտով աղջիկը տեսավ, որ նա անլուրջ երիտասարդ է, և որ գլխավորն է՝ ամուսնացած:

Ոչ, այժմ Լիան չի մխիթարում իրեն այն մտքով, թե իբր իր աշխատանքի և բնակության պայմաններն են մեղավոր իր մենակության մեջ: Հո Անժիկն էլ չի՞ ապրում քաղաքի ծայրին, նրա տունը կենտրոնական պողոտաներից մեկի վրա է, նա շուտ-շուտ է լինում փողոցներում, այգիներում, թատրոններում: Բացի դրանից, նա ունի եղբայր և նրանց տանը հաճախ են լինում եղբոր ընկերները, բոլորն էլ ամուրի, լավ տղաներ: Իսկ մի՞թե անհետաքրքիր աղջիկ է Անժիկը: Նրա՞ նմաններն են ամուսնանում, ընտանիք կազմում ..

Աբովյանի վերևում Լիան նկատում էր, որ մարդկային հոսանքն այլևս հավասարապես երկկողմանի չէր, այլ մեծ մասամբ վերևից ներքև: Եվս որոշ տարածություն անց՝ Լիայի ուղղությամբ քայլող մնում էին հատուկենտ մարդիկ, ապա նաև ոչ ոք... Լիան արդեն հասած էր լինում քաղաքի աշխարհագրական սահմանին:

Եթե ամենաընդհանուր գծերով պատկերացնենք Երևանի տեղադրությունը, ապա քաղաքը պարփակված էր պայտաձև կանգնած սարերի և բլուրների միջև: Ազատ մնացած կողմը նայում էր դեպի հարավ՝ դեպի Արարատյան ընդարձակ հարթավայրը և հորիզոնի վրա երկինք խոյացած Մասիսները:

Եվ ահա, Աբովյանն ու դրան զուգահեռ փողոցները, ձգվելով հարավից հյուսիս, գնում էին դեպի պայտի փակուղին և այնտեղ ուղղակի դեմ առնում պատի պես դիք կանգնած սարին: Աբովյանն ավարտվում էր մի փոքրիկ ծաղկանոցով, որի կենտրոնում կանգնած էր Խաչատուր Աբովյանի արձանը՝ սարի ֆոնի վրա:

Արձանը շրջապատված ծաղկանոցից դեպի ձախ, սարն ի վեր, բարձրանում էր դեպի Հայաստանի լեռնային շրջանները տանող ճանապարհը: Բարձրանում էր հետզհետե ավելի և ավելի վեր, և մարդիկ մեքենայի ձախակողմյան լուսամուտներից կարող էին նայել քաղաքի հետզհետե իջնող հիանալի ընդարձակ տեսարանին: Ապա, սարի վերևում, մեքենան կտրուկ շրջադարձ էր կատարում դեպի աջ և, ետևում թողնելով քաղաքը, ուղղաձիգ սլանում էր բարձրավանդակով:

Բայց Լիայի ճանապարհը ծաղկանոցի մոտից ոչ թե դեպի ձախ էր, այլ՝ աջ: Աբովյան փողոցով եկած-հասած լինելով մինչև դրա ծայրը և զուգահեռ մյուս փողոցների ծայրերը, նա այժմ պետք է կտրեր-անցներ դրանց մոտով, շրջանցեր, բարձրանար «պայտի» կողքային բլուրը և դրա լանջով նորից ետ գնար դեպի քաղաք՝ այդ փողոցներին զուգահեռ, միայն թե բարձրով, լանջի վրայով:

Բլուրների պայտը, սակայն, ճեղքված պայտ էր: Եվ այդ ճեղքով, որ բավական խորն էր և ընդարձակ, հոսում էր սակավաջուր մի առվակ՝ գալով «պայտի» դրսի կողմից և իջնելով քաղաք: Առվակի երկու կողմերում ձգված էին ասֆալտած երիզներ և կանգնած էին շենքեր:

Լիան անցնում էր առվակի կամրջակի վրայով, անցնում էր մի ուրիշ կամրջակի տակով: Այդ երկրորդն արդեն պատկանում էր երկաթուղուն, կամրջակի վրայով անցնում էին Երևան-Սևան երկաթուղու ռելսերը: Դրանք, սակայն, գալով բլուրի լանջով, քաղաքի կողմից, ոչ թե շարունակում

էին իրենց ճանապարհը «պայտի» ճեղքով, առվակին զուգահեռ, այլ շատ բարձր մի կամրջով կտրում էին առվակն ու դրա ձորը և գնում բարձրավանդակով դեպի ձախ:

Լիան քայլում էր լանջով ձգված ասֆալտած ճանապարհով: Դրան զուգահեռ, բայց ցածրով, գնում էր երկաթուղին: Դրանից էլ ցածր, նույնպես զուգահեռ, առվակը, իսկ առվակի այն կողմում, զուգահեռ և նորից զուգահեռ՝ փողոցները:

Իսկ այժմ ժամանակն է ասելու, որ պայտն այնքան էլ նման չէր պայտի, այլ ավելի նման էր ձիու լծասարքի աղեղի, որովհետև վերևում լինելով նեղ, շարունակ լայնանում էր և լայնանում: Քաղաքը, պայտի փակուղու մոտ ունենալով ընդամենը մի քանի փողոցներ, ընդարձակվում ու ընդարձակվում էր՝ փռվելով լայնարձակ:

Հատկապես արագ էր լայնանում պայտի այն թևը, որի լանջով գնում էր Լիան: Բլուրը նրա առջևում այնքան կտրուկ կերպով էր ետ գնացել, որ դիմացը մնացել էր միայն կապույտ երկնքի անսահմանությունը: Թվում էր, թե բլուրն ընդհանրապես վերջանում էր այդտեղ:

Լիան երբեմն քաշվում էր մի կողմ՝ ճանապարհ տալով անցնող ավտոբուսին: Ավտոբուսը, ուժեղ ու հաղթանդամ, բայց դժվարություններից փնթփնթացող մարդու նման, սլանում էր աղջկա մոտով և գնում էր կարծես գահավիժելու դիմացը բացվող կապույտ անսահմանության մեջ: Բայց նա չէր գահավիժում, այլ անհետանում էր բլուրի շրջադարձի ետևում: Եվ Լիան գիտեր, որ ավտոբուսն այնտեղ ոչ թե շարունակում էր գնալ լայնացած բլուրով, այլ շուռ էր գալիս և վերադառնում քիչ առաջ եկած իր ճանապարհին զուգահեռ, միայն թե հեռու և ավելի բարձր:

Ափսոս, որ Լիան չէր կարողանում օգտվել այդ ավտոբուսից, դա կանգառ չուներ Լիայենց տան մոտ, այլ գնում էր մանկական սանատորիա, տուրիստական բազա և հանգստի մի քանի տները:

Բլուրը, որի լանջով գնում էր Լիան, ամբողջովին ծածկված էր խաղողի այգիներով և պտղատու ծառերի պարտեզներով: Մանավանդ՝ ձախ կողմում, լանջն ի վեր: Իսկ աջում, լանջն ի վար, այգիներն ստիպված էին եղել իրենց տեղը զիջել ոչ միայն երկաթուղուն, այլև միահարկանի և երկհարկանի տների, որոնցից մի քանիսն այնքան էին բարձրացել, որ դրանց տափակ կտուրները գտնվում էին համարյա ճանապարհի բարձրության վրա:

Գնալով իր ճանապարհը, Լիան, սակայն, չէր հասնում բլուրի կապույտ սահմանին, երկնքին: Շուտով նա թեքվում  էր ձախ և քարքարոտ մի նեղ ճանապարհով, ծառերի մեջ կորած ու ստվերոտ, դիք բարձրանում էր լանջն ի վեր:

Նախքան թեքվելը և բարձրանալը, Լիան, համարյա ամեն անգամ, մի պահ կանգ էր առնում և նայում քաղաքին:

Ինչպիսի՜ գեղեցիկ, փառավոր տեսարան...

Նայելով դրան, Լիան մտածում էր տխուր. մեծ կյանքն իր ուրախություններով ու հետաքրքրություններով մնաց այնտեղ, իսկ ինքը դուրս ելավ այնտեղից...

Ոչ, հարցը բոլորովին էլ այն չէր, որ մարդիկ ապրում էին ներքևում, միասին, իսկ ինքը՝ վերևում, մենակության մեջ: Հարցն այն էր, որ բոլորն այնտեղ զբաղ ու գիշեր ունեին իրենց տեղն ու գործը, իսկ ինքը, օրվա այդ ժամից սկսած, ոչինչ չուներ անելու՝ մինչև վաղը առավոտյան մուտքի դրամարկղը նորից բաց անելը...

Հիմա այնտեղ մարդիկ գնում գալիս են փողոցներով, ժամադրությունների են շտապում, հանդիպում են իրար, կամ նստել են տներում, ճաշարաններում, մտերիմ մարդկանց շրջանակում, խոսակցում են, ծիծաղում, ժամանակ անցկացնում...

Ո՞վ գիտե, գուցե հենց այս րոպեիս, այ, այն պուրակում, նստարանի վրա նստած, մի երիտասարդ տղա սեր է բացատրվում մի աղջկա... Իսկ ինչո՞ւ միայն նրանք: Լիային թվում էր, թե քաղաքի ամբողջ տարածությունից, պուրակներից, բնակարաններից, փողոցներից, նրա լսողությանն էին հասնում հուզված և կամացուկ շշունջներ. «Սիրում եմ քեզ, Աստղիկ»... «Սիրում եմ քեզ, Անահիտ»... «Սիրում եմ քեզ, Արփիկ»... «Սիրում եմ քեզ, Լիա»... Բայց այդ վերջինը՝ ոչ:

«Սիրում եմ քեզ, Հայկանուշ Հայկովնա»...— բոլորովին անսպասելի անցնում էր Լիայի մտքով: Նա մի պահ պատկերացնում էր հավաքիչ գանձապահին՝ հիսնամյա աղջկան սեր բացատրվելիս, և այնքան վառ էր պատկերացնում, որ բարձր ծիծաղում էր և դուրս գալիս իր թախծոտ ու մտածկոտ վիճակից: Ի՞նչ արած, այդպես է նրա երիտասարդ բնավորությունը, նա չի կարողանում երկար տխրել:

Լիան շուռ էր գալիս քաղաքից և մտնում իր տան ճանապարհը՝ այգիների ցածրիկ պարիսպների միջև սեղմված: Պատերի ետևից հսկայական ընկուզենիներ և այլ ծառեր այնպիսի խիտ առաստաղ էին հյուսել ճանապարհի վերևում, որ արևի ոչ մի բիծ չկար գետնի վրա: Շուրջն ամեն ինչ ստվերոտ էր, զով և նույնիսկ խոնավ:

Համատարած ստվերի բավական հեռվում, ձախում, գետնի վրա երևում էր նեղ ու երկարավուն մի արևոտ տարածություն, որը շրջապատի համարյա թե կիսախավարի մեջ թվում էր շլացուցիչ լուսավոր: Այնտեղ, այգիների պարիսպից մի քիչ ետ, Աբգարյանների տան մեկնկեսհարկանի ճակատն էր կանգնած՝ վեց լուսամուտներով և դրանց կողքին դեպի պարտեզ տանող փոքրիկ դռնով:

Դե եկ և գտիր Երևանի այդ հիանալի անկյունը...

Նախքան իրենց տուն հասնելը Լիան մի անգամ էլ էր կանգ առնում և նայում: Աջում, իրենց տան դիմացի կողմում բայց ոչ թե դիմացը, այլ դեռ չհասած, այգիների խճաշեն պատը քանդված էր մի քիչ տեղ և նորից շարված, սակայն այս անգամ՝ կանոնավոր քարերից, ինչպես տան պատ: Իրոք էլ, դա տան պատ էր՝ միայն մի քիչ բարձրացած: Դրա ետևում գետնից վեր էին բարձրացել նաև մյուս երեք պատերը և սենյակների ներքին պատերը: Եվ դա ոչ թե վերջերս, այլ դեռ հինգ տարի առաջ, գուցե և ավելի: Համենայն դեպս, երբ Աբգարյաններն սկսեցին կառուցել իրենց տունը, այդ տան հիմքը, հենց այդ վիճակում, արդեն կար: Ճիշտն ասած, եթե դա չլիներ, նրանք հազիվ թե իրենց տունը կառուցեին քաղաքի այդ հեռավոր և ամայի վայրում: Բայց քաղխորհրդի գլխավոր ճարտարապետը հավաստիացրեց նրանց, որ շուտով այդ անբնակ ճանապարհը վերածվելու է փողոցի՝ բազմաթիվ տներով, խանութներով և այլն և այլն: Արևհատը եկավ նայելու, տեսավ տան հիմքը, համոզվեց, որ իրենք մենակ չեն մնալու, և համաձայնվեց վերցնել իրենց հատկացված հողամասը: Բայց նրանք իրենց տունը կառուցեցին, ավարտեցին, ահա հինգ տարի է, ինչ ապրում են այդտեղ, բայց ոչ դիմացի տունն էր կառուցվում և ոչ էլ մի ուրիշ տուն: Նախագի՞ծն էին փոխել քաղխորհրդում, թե՞ մարդիկ իրենք էին հրաժարվում տուն կառուցել այդտեղ՝ հայտնի չէր և նույնիսկ հետաքրքիր էլ չէր: Կարևորն այն էր, որ, ինչպես Արևհատն էր ասում հաճախ՝ «իրենց խաբեցին»: Բայց եթե առաջներում նա այդ ասում էր անկեղծ բարկությամբ, ապա հիմա միայն ձևացնում էր այդ բարկությունը, որովհետև վարժվել էր իր նոր կենցաղավարությանը և հարևանների կարիք չէր զգում, նույնիսկ գոհ էր նրանց բացակայությունից:

Բայց այդ տարի, գարնանից ի վեր, Արգարյաններն սկսել էին նկատել, որ հինգ տարի շարունակ անտեր թողնված տան հիմքն սկսում էր բարձրանալ: Ամեն օր աշխատանքից տուն գալիս նրանք տեսնում էին, որ պատերը բարձրացել են ևս մի կամ երկու շարք քարերով: Տունը, կարծես հուսահատվելով, թե մարդիկ երբևէ կզբաղվեն նրանով ինքն էր սկսել աճել առանց նրանց օգնության, երևի բույսի նման արմատներ գցելով հողի մեջ և այնտեղից ծծելով իր շինանյութերը:

Ո՞ւմ էր պատկանում այդ տան հիմքը, ովքե՞ր էին բարձրացնում տունը, իրոք: Հին տերե՞րը, թե՞ նոր մարդիկ: Իրե՞նք էին աշխատում շինարարության վրա, թե՞ վարձած արհեստավորները՝ Արգարյանները երկար ժամանակ չգիտեին: Բայց, մի կիրակի օր, երբ նրանք տանն էին, Գարսևանը, լսելով քարտաշի մուրճի ձայն, դուրս ելավ և շուտով վերադարձավ նորություններով: Տունը պատկանում էր Հակոբ անունով մի մարդու, որի տղան իր ընկերներով ու մի քանի արհեստավորների հետ միասին հիմա աշխատում էր այնտեղ: Բոլորը գտնվում էին պետական աշխատանքի մեջ, ուրեմն այդ տան վրա կարող էին աշխատել միայն կիրակի օրերը: Իսկ մինչ այդ աշխատում էին արձակուրդի մեջ գտնվող երկու բանվորներ, որոնք նորից անցել էին աշխատանքի և ուրեմն նույնպես չէին կարող լի օրերը: Ինչպես էլ որ լիներ, Հակոբը, ծեր, բայց առույգ մարդ, որ նստած, նայում էր շինարարությանը, հույս ուներ, որ այս տարի կավարտեն շենքը: Գարսևանն անհարմար էր գտել առաջին իսկ հանդիպման ժամանակ հարցնել ավելի ևս այլ մանրամասնություններ:

Կանգ առնելով այժմ այդ տան մոտ, Լիան գիտեր, որ փոփոխություն չկա, լի օրով ոչ ոք չի աշխատել դրա վրա: Բայց նա մտածում էր ուրիշ բանի մասին: Տեսնես ինչ ընտանիք է դա և ինչպիսին է նրանց տղան... Գոնե կարելի կլիներ երբեմն-երբեմն միասին գնալ քաղաք և վերադառնալ՝ առանց վախենալու: Բայց ինչո՞ւ է խաբում Լիան իրեն, մի՞թե նա մտածում է միայն ուղեկցելու մասին...

Լիան մոտենում էր իրենց տանը: Տան ճակատային պատը և դրա տակի մայթն ամբողջովին արևոտ են: Տունն ունի մեկնկես հարկի բարձրություն: Ներքևի կես հարկը լուսամուտներ չունի, իսկ բնակարանի վեց լուսամուտներն էլ պատած են սպիտակ ներկված երկաթավանդակներով:

Լիան բանալիով բաց էր անում պարտեզի փոքրիկ դուռը, մտնում ներս և խնամքով ծածկում՝ առանց փակելու:

Դռան ետևում արդեն սկսվում էր ուրիշ աշխարհ, ուրիշ կյանք:

**2**

Դուռը բաց անելուց հետո ամեն անգամ Լիան կանգ էր առնում վարանոտ.— գողեր չե՞ն մտել արդյոք: Դա նշանակություն չուներ, որ դուռը փակ էր, նրանք կարող են մագլցել դռան վերևով...

Բայց Լիային անհանգստացնում էր ոչ թե այն, որ գողերը կարող էին կողոպտել նրանց, այլ որ կարող էին դեռ հիմա էլ ներսում լինել, վախեցնել նրան կամ նույնիսկ սպանել...

Իհարկե, Լիան կարող էր մի քիչ դանդաղել քաղաքում և գալ այն ժամանակ, երբ ծնողները կամ նրանցից մեկը տանը լինեին: Բայց մի՞թե կարելի է այդպես: Չէ՞ որ նույն կերպ նրանք էլ էին վախենում գողերից: Եվ Լիան միշտ գալիս էր առանց դանդաղելու և միշտ լինում էր առաջինը:

Լիայի աջ թևի վրա պետական մի մեծ այգու երկար պատն էր, իսկ ձախ թևի վրա՝ իրենց տան կողքային խուլ պատը և ապա ծառերի ու թփերի խտության մեջ սուզված իրենց պարտեզը:

Լիան շուռ էր գալիս դեպի բնակարանը: Հին Երևանի ոճով կառուցված սովորական շենք, որի տակ, կիսագետնափոր կիսահարկ, որն այդ կողմից ուներ չորս լուսամուտ և մեջտեղում դուռ: Այդ կիսահարկում տեղավորված էին Աբգարյանների մառանը, պահեստը և խոհանոցը ու մի սենյակ, որը նրանք վաղուց էին մտադիր դարձնել բաղնիք: Բնակարանն իր ամբողջ երկարությամբ ունի փայտե լայն պատշգամբ՝ մի քանի սյունակների վրա խարսխված: Երկու ծայրերում փակ պատերով, վերևում առաստաղով, դա ոչ այնքան պատշգամբ էր, որքան որ ամառային բնակարան: Մաքուր սպիտակեցրած երեք պատերը և դիմացի կողմից ճաղաշարն ավելի էին ընդգծում դա: Վեց աստիճաններով քարե սանդուղքը բարձրանում էր դեպի ճաղաշարի դռնակը, որը միշտ բաց էր և ետ ծալած:

Նախքան բարձրանալը, Լիան նայում էր պատշգամբի տակ կիսահարկի դռնակին: Կողպեքն իր տեղումն է: Ապա, սանդուխքի առջևում փռված փալասի վրա հանում էր իր կիսակոշիկները, ոտքերն անցկացնում հենց այդտեղ էլ թափթփված մի քանի զույգ տնային փափուկ ոտնամաններից առաջին հանդիպածների մեջ և բարձրանում պատշգամբ:

Կարմիր, փայլուն հատակ: Դիմացը՝ դեպի սենյակները տանող նախասենյակի երկփեղկանի սպիտակ դուռը: Դռան մի կողմում՝ մեծ սենյակի երեք լուսամուտները, մյուս կողմում՝ դարձյալ երեք լուսամուտ, բայց երկու միջանցիկ սենյակի պատկանող — առաջինը՝ մեծ, իսկ երկրորդը՝ փոքր:

Միայն զգուշությամբ ձեռք տալով դռանը և համոզվելով, որ դա ևս փակ է բանալիով, Լիան մոտենում էր պատշգամբի ամենածայրում, փոքր սենյակի լուսամուտի տակ դրված իր մահճակալին, պայուսակը նետում անկողնի վրա, նստում, հանում գուլպաները՝ կիսահանած վիճակում մի պահ դանդաղելով ու զննելով, թե հատ հո չի՞ ընկել: Ոչ, չի ընկել: Ապա մի պահ էլ նայում էր իր մերկ ոտքերին՝ տգեղ չե՞ն: Ոչ, տգեղ չեն: Դրանից հետո նա վեր էր բարձրացնում շրջազգեստի փեշերը՝ գլխի վրայով հագուստը հանելու համար, բայց դեռ չհանած, աղջկա բնածին ամոթխածությամբ զգուշությամբ նայում էր աջ, ձախ, թե ոչ ոք չի՞ տեսնում նրան, թեև, հասկանալի էր, որ ոչ ոք չկար մոտերքում ոչ մի տեղ: Նա հագուստը նույնպես նետում էր անկողնի վրա, միայն թե խնամքով, որ չճմրթվի: Ապա վերցնում էր պատի մեխից կախված իր տնային հագուստը և հագնում: Դա նրա համար փոխարինում էր խալաթին: Հին հագուստ էր՝ արևի տակ խիստ գունաթափված, և որ գլխավորն էր՝ նրա վրայով խիստ փոքրացած: Այնպես որ, երբ հագնում էր դա, նրա ծնկները և դրանցից էլ բավական վերև, մնում էին բաց: Հագուստը նաև զգալիորեն նեղ էր և սեղմում-ընդգծում էր Լիայի կրծքերը, որոնք փոքր էին և սովորաբար համարյա չէին նկատվում: Ի՞նչ արած, նա չունի փոքր քույր, որին տա իր փոքրացած, բայց դեռ նոր հագուստները: Իսկ դեն նետել ափսոս է, և նա կրում էր մինչև լրիվ մաշվելը: Իսկ որ փոքրացել էր իր վրայով՝ դա ոչինչ, ո՞վ էր տեսնում Լիային՝ բացի ծնողներից:

Զգվելով դեպի լուսամուտի գոգը, Լիան այնտեղից վերցնում էր օճառամանը՝ օճառով, բարձի մոտից վերցնում էր սրբիչը և գցում ուսին: Բայց այդտեղ նա հիշում էր, որ պահարանում երեկվանից մնացել է ձվով տապակած շատ համեղ լոբի: Նա արագ անցնում էր պատշգամբի մյուս ծայրը, այն, որը պարտեզի դռանն էր մոտիկ, և, անցնելով մեծ սենյակի երեք լուսամուտների տակ դրված իր ծնողների մահճակալի մոտով, մոտենում էր ծայրային պատը համարյա ամբողջովին զբաղեցրած հնաձև բուֆետ-պահարանին, բաց անում: Դարակներն զբաղված էին լավաշ հացով, շաքարի, բրնձի, կորկոտի տոպրակներով, ապակյա և թիթեղյա տուփերով, որոնց մեջ՝ աղ, պղպեղ, հազար ու մի համեմունք: Փայլում էին ալյումինե մեծ ու փոքր կաթսաներ, դրված էին բաժակներ, ափսեներ... Լիան վերցնում էր լոբու կաթսան, բաց էր անում կափարիչը, հոտ էր քաշում՝ չի՞ թթվել: Ոչ, չի թթվել, բայց անպայման հարկավոր է այս տարի սառցարան գնել...

Նա պատառաքաղով վերցնում էր երկու կանաչ լոբի՝ վրան ձվի դեղնասպիտակ հետքերով, դնում էր բերանը, բավականությամբ մանր-մանր ծամում, ապա հառաչելով նայում էր թևի ժամացույցին՝ շո՞ւտ են գալու ծնողները, որպեսզի ճաշեն:

Նա իջնում էր պատշգամբից, փալասի վրա հանում էր փափուկ ոտնամանները, հագնում խառնիխուռը թափթփած հնամաշ կիսակոշիկներից երկուսն առանց ընտրության, քայլում: Պարտեզը նրա դիմաց, գետնից մինչև ծառերի գագաթները, իրենից ներկայացնում էր բաց կանաչ բուսականության և վառ դեղին արևի մի լուսավոր խառնուրդ: Ստվերներ կարծես գոյություն չունեին լույսով տակետակ թափանցված այդ պարտեզում, որը, այնուամենայնիվ, չնայած դրան, այնքան անթափանց էր հայացքի համար, որ չգիտեիր, թե ինչ կար երկու քայլ ավելի խորքում: Երբ Լիան մտնում էր այնտեղ, նա ոչ միայն չէր տեսնում պարտեզի պարիսպներն աջում, ձախում կամ դիմացը, այլև չէր էլ զգում, թե դրանք գոյություն ունեին որևէ տեղ: Ու թեև արդեն հինգ տարի էր, ինչ նա ապրում էր այդտեղ, ու թեև գիտեր, որ պարտեզի լայնությունն ընդամենը տասնչորս մետր էր, իսկ խորությունը՝ քսաներկու, բայց ի՞նչ նշանակություն ունեին այդ թվերը, երբ բուսականության մեջ կորած, պարտեզը կարծես անծայր լիներ: Ծառերի, թփերի և գետինը ծածկած խոտի այնպիսի առատություն էր պարտեզում, որ այդքանով կարելի էր ծածկել տաս անգամ ավելի մեծ տարածություն, և դա դարձյալ ցանցառ չէր լինի:

Լիան անցնում էր մի մեծ բալենու միջո՞վ, թե՞ երկու մեծ բալենու արանքով: Ճյուղերը, ոչ բարձր, այնքան խիտ էին, որ զարմանում էիր, թե ինչպես էին հաջողացրել բոլորն էլ ողողվել արևի լույսով՝ սկսած Լիայի ծնկներից մինչև գլխից էլ բարձր: Եվ ի՜նչ հրաշալի ներդաշնակություն՝ բաց կանաչ սաղարթի քառսային զանգվածի մեջ ամեն տեղ վառ կարմիր բալեր՝ խելքից-մտքից դուրս առատությամբ:

Լիայի հագուստի վրա, որի վառ նախշերը գունաթափվելուց համարյա հավասարվել էին սպիտակ ֆոնին, փխլվում էր խիստ հասած մի բալ՝ թողնելով վառ կարմիր կլոր բիծ: Այդպիսի ուրիշ բծեր էլ կային հագուստի զանազան մասերում: Թվում էր, թե խեղճ աղջկան գնդակահարել էին բազմաթիվ տեղերից:

Երբ Լիան դուրս էր գալիս բալենու, թե բալենիների միջից, նրա առջև բացվում էր մի փոքրիկ արձակ տարածություն՝ չորս կողմից պտղատու ծառերով շրջապատված: Այդտեղ բանջարանոց էր՝ պոմիդորի, տաքտեղի, լոբու, կանաչու և մանավանդ վարունգի մարգերով: Վարունգը գրավում էր բանջարանոցի կեսից ավելին: Բայց, ինչ էլ որ լիներ, դա չէր բավականացնի Արևհատին նույնիսկ մի շաբաթ՝ վաճառելու համար: Նա վարունգը գնում էր ուրիշներից, իսկ իր ունեցածը միայն ապացույցի համար էր՝ եթե երբևէ նրան կասկածեին վերավաճառքի մեջ:

Լիայի դիմաց, բանջարանոցից այն կողմ, ծառերի տակ կանգնած էր աղբյուրը՝ պարզապես գետնից դուրս ցցված երկաթե նեղ խողովակ՝ դեղին ծորակով: Այժմ ծորակը փակ էր, բայց դա մի քիչ փչացել էր, և դրանից, հարբուխ ընկածի քթի պես, շարունակ կաթում էր: Այդ պատճառով աղբյուրի շուրջը միշտ թաց էր: Թաց էր նաև այն պատճառով, որ աղբյուրի կողքին դրված էր մի ոչ մեծ տակառ՝ ջրով լիքը, և դրա տախտակների ճեղքերից նույնպես, դուրս էր ծորում ջուրը:

Մարգերի արանքով Լիան քայլում էր դեպի աղբյուրը: Նույն պահին, անշշուկ, ինչպես ստվեր, նրա մոտով անցնում էր մի հսկայական գամփռ՝ առանց նրան նայելու, կարծես միայն ներկայանալու համար: Դա նրանց շունն էր՝ Մուխաննաթը, որ արաբերեն նշանակում է նենգ: Շունն այդ անհիրապույր անվանը պարտական էր իր իսկապես որ նենգ բնավորությամբ, իհարկե, ոչ թե տան տերերի, այլ անծանոթ մարդկանց նկատմամբ:

Դեռ ոչ ոք չէր լսել Մուխաննաթի հաչոցը: Կարելի էր ասել, որ Աբգարյաններից բացի ոչ ոք չէր էլ տեսել նրան՝ բացի այն երկու մարդուց, որոնց կծել էր նա: Մուխաննաթը միշտ թաքնված էր ծառերի տակ ինչ-որ տեղ, և տան տերերն անգամ չէին կարող ասել, թե որտեղ էր նա տվյալ պահին: Բայց նրանք գիտեին հաստատապես, որ Մուխաննաթը քնած չէր, նա հսկում էր տունը: Ճիշտն ասած, Աբգարյանների հույսը ոչ թե ողորմելի կողպեքների վրա էր, այլ նենգ Մուխաննաթի:

Եթե որևէ անծանոթ մարդ, վայ նրան, փորձեր մտնել պարտեզ՝ առանց տերերին իմաց տալու, ապա նա չէր էլ նկատի, թե ինչպես, ստվերի նման անշշուկ, դանդաղ ու մանրիկ քայլերով, կարծես ոչ թե քայլելով, այլ սահելով, նրան կմոտենար Մուխաննաթը և առանց ավելորդ հարահրոցի, լուրջ ու գործնական տոնով կխրեր իր ատամները նրա սրունքի մեջ: Ապա, առանց շտապելու մի կողմ քաշվելով, կնստեր և ուշադիր հայացքով, համարյա թե հոգատարությամբ, կնայեր անծանոթի աչքերին՝ կարծես հարցնելով՝ կրկնե՞լ, ես ձեր տրամադրության տակ եմ...

Ի դեպ, հինգ տարում այդպիսի միայն երկու դեպք էր պատահել և երկու դեպքում էլ դրանք եղել էին անմեղ, բայց Մուխաննաթին անծանոթ մարդիկ: Գողեր, բարեբախտաբար, դեռ չէին մոտեցել այդ տանը, բարեբախտաբար՝ ոչ միայն տան համար, այլև գողերի: Գալով Աբգարյանների խիստ փոքրաթիվ բարեկամներին ու ծանոթներին, ապա Մուխաննաթը նրանց բոլորին ճանաչում էր և հիշում, ուստի և, նրանց այցելությունների ժամանակ, որոնք, ի դեպ ասած, չափազանց քիչ էին պատահում, նա չէր էլ երևում:

Լիան սկսում էր լվացվել՝ երկար, մանրամասն, որոշակիորեն մեծ բավականություն ստանալով այդ գործից, համարյա թե երեխայի պես խաղալով ջրի հետ: Նրա մերկ թևերն ու ոտքերը փշաքաղվում էին երևանյան սառը ջրից, բայց գուցե հենց դա էր դուր գալիս Լիային: Նա նրբակազմ, նիհարկոտ աղջիկ էր՝ երկար թևերով ու ոտքերով, բարձր կրծքով ու կոնքով, ոտից գլուխ բարեձև:

Լիան ուներ երկար, փարթամ մազեր՝ համարյա թե բաց շագանակագույն: Հյուսել իր մազերը նա համարում էր հնաձևություն, իսկ կտրել ափսոսում էր: Ուստի և հավաքում էր ծոծրակի վրա և ամրացնում մազակալներով: Հավաքում էր մազերը, կոկիկ ձգում և դրանց տալիս էր կոնուսի ձև: Այդպիսի մազահարդարը խիստ սազում էր նրա փոքրիկ գլխին՝ նուրբ դիմագծերով: Ոչինչ շեշտված չէր այդ դեմքի վրա՝ ոչ քիթը, ոչ բերանը, ոչ նույնիսկ աչքերը: Դրանք բոլորը չափավոր փոքր էին և չունեին ընդգծված հայկական գծեր՝ բացի հոնքերից, որոնք նրա դեմքը դարձնում էին հայ աղջկա դեմք: Ոչինչ չէր կարելի ասել այդ հոնքերի մասին, ոչ մի կերպ չէր կարելի նկարագրել՝ ոչ հաստ, ոչ բարակ, ոչ կամարաձև, ոչ «ծիծեռնակի թևերի նման»... Պարզապես՝ հայկական հոնքեր:

Երբ Լիան վերադառնում էր լվացվելուց՝ նա արդեն մի այնպիսի սքանչելի աղջիկ էր, որ հազիվ թե որևէ երիտասարդի սիրտ կարողանար դիմանալ՝ եթե տեսներ նրան այդ րոպեին բալենիների միջից դուրս գալիս: Ոտաբոբիկ, ծնկներից բարձր և անթև շրջազգեստով, մաքուր լվացված՝ ինչպես անձրևով ողողված հասուն միրգ, նա ոտից գլուխ այնքան հավաքված էր ու կոկիկ, որ թողնում էր անթերի տպավորություն: Եվ, իրոք, ի՞նչ թերություն ունի Լիան,— ոչ մի: Ծառերի արանքներով անցնելիս ճյուղերը նրա ճակատի վրայի հարթ սանրվածքի միջից դուրս էին խլել մազերի մի փոքրիկ փունջ,— դա էր միակ «թերությունը» նրա կոկիկության մեջ: Բայց որքա՛ն էր սազում նրան այդ «թերությունը»՝ մանավանդ երբ գիտեիր, որ դիտմամբ չի արված դա՝ ավելի գեղեցիկ երևալու համար:

Բայց, որքան էլ որ կարելի լիներ հիացական խոսքեր ասել Լիայի բարեմասնությունների մասին, այնուամենայնիվ նրա ամենամեծ բարեմասնությունը ձեռքերն էին: Բնությունը շատ հազվադեպ է ստեղծում այդպիսի անթերի գեղեցկություն: Հազիվ թե Երևանում կարելի լիներ գտնել ևս մի զույգ այդպիսի կանացի ձեռքեր: Ո՞վ կարող էր այժմ ասել, թե դրանք մուտքի դրամարկղում

գործառնություններ կատարող այն աղջկա ձեռքերն էին՝ «լուսամուտին մոտիկ նստած»: Բազուկներից հետ սատինե մուգ կապույտ թևքեր հագած, թանաքոտ մատներով, դրանք այնտեղ ոչ թե աղջկա թաթիկներ էին, այլ գրասենյակային պիտույքներ:

Եթե Լիան ոտից գլուխ աղջիկ էր և աղջիկ էր մանավանդ իր դյութիչ ձեռքերով, ապա առատ մազերի կոնուսը նրան նմանեցնում էր երիտասարդ կնոջ: Լիան ինքն էլ գիտեր այդ, նա երբեմն նույնիսկ նեղվում էր դրանից, որովհետև մազերը բամբասում էին նրան կամ, լավագույն դեպքում, առաջ էին անցնում իրականությունից: Մերթ-մերթ նա որոշում էր փոխել իր մազահարդարի ձևը՝ գտնելով, որ դա էր իր մենակության պատճառը.— մարդիկ կարծում էին, թե նա ամուսնացած էր և հանգիստ էին թողնում նրան: Բայց թող մտածեն՝ ինչ որ ուզում են, մազերի այդ ձևը խիստ սազում է Լիային, նա չի փոխի դա ոչ մի դեպքում և նույնիսկ մեռնելիս էլ կպատվիրի, որ այդպես թաղեն նրան...

Բայց իզուր էր զրպարտում Լիան իրեն, թե իբր ոչ մի տղամարդու չի հաջողվել հետաքրքրվել նրանով: Որ չէին ժպտում նրան՝ դա ճիշտ էր,— Լիան ոչ թե ժպիտ էր առաջացնում, այլ սիրախառն ակնածանք: Տղամարդիկ զգում էին, որ նա թեթև ծանոթության աղջիկ չէ, նա կարող է լինել կամ անծանոթ, կամ դառնալ օրինակելի կին, կյանքի ընկերուհի... Իր ամենահոռետես տրամադրության մեջ անգամ Լիան չէր կարողանա ժխտել, որ շատ տղամարդիկ էին նայում նրան: Իսկ եթե չէին փորձում ծանոթանալ, ապա դրա պատճառը, ըստ երևույթին, այն էր, որ նրանք կամ արդեն ամուսնացած էին, կամ դեռ չէին ուզում ամուսնանալ կամ դրա նման մի ուրիշ բան: Ինչ էլ որ լինի, տխուր երևույթ է այն, որ բավական թվով աղջիկներ, դրանց մեջ նաև Լիան, չեն գտնում ամուսիններ... Փաստ է նաև այն, որ նրանք ոչնչով պակաս չեն ուրիշներից և ոչնչով էլ մեղավոր չեն իրենց մենակության մեջ: Կանացի, համեստ, խելոք, աշխատասեր, ամենագլխավորը՝ գեղեցիկ, նրանք անում են ամեն բան, որպեսզի, եթե ոչ ընդգծեն, ապա գոնե ստվերի մեջ չթողնեն իրենց գեղեցկությունը: Բայց կյանքում իր զույգը գտնելն այնպիսի տարերային բան է, այնպիսի տարերային բան, որ... դրա մեջ չէ՞ արդյոք ամբողջ գրավչությունն ու հետաքրքրությունը...

Երբ Լիան վերադառնում էր լվացվելուց, հայրն արդեն եկած էր լինում: Հայր ու աղջիկ նայում էին իրար, բայց ոչինչ չէին ասում՝ թեկուզ և ունենային նորություններ: Պահում էին՝ սեղանի շուրջն իրար հայտնելու համար: Գարսևանն շտապում էր պարտեզ՝ նայելու համար ծառերին ու բանջարանոցին, ջրելու՝ ինչը որ հարկավոր էր ջրել, քաղելու՝ ինչը որ հարկավոր էր քաղել... Աղբյուրի ծորակը կիսաբաց անելով, նա պոկում էր մի հասած ձմերուկ և դնում շիթի տակ՝ սառեցնելու համար:

Արևհատը միշտ վերջինն էր գալիս տուն, իսկ վերջերս սկսել էր նաև բավական ուշանալ: Լիան հիմքեր ուներ կասկածելու, որ այդտեղ տղամարդու մատ էր խառնված: Մայրը վերջերս բավական հաճախ էր գործածում ինչ-որ Արտյուշայի անունը: Մոր պատմություններից Լիան ու հայրն արդեն գիտեին, որ դա շուկայի մուտքերից մեկի հսկիչն էր, որի պարտականությունն էր՝ վաճառքի համար ներս բերվող մթերքներից գանձել համապատասխան տուրքը: Դա նա էր շարունակ աչք փակում Արևհատի թթվի նորանոր դույլերի առաջ, որոնք օրվա ընթացքում քանիցս ներս էին անցնում շուկա: Իսկ վերջերս այդ Արտյուշային առաջ էին քաշել և դարձրել շուկայի վարիչ:

Համապատասխանորեն, Արևհատը վերջերս դադարել էր հոլովելուց այն այրի ծերուկի անունը, որի տանը դրված էին նրա թթվի տակառները — այն ծերուկի, որը — նա այդ ասում էր ամուսնուն,— «քո տարիքին է, բայց դեռ շատ պինդ է մնացել»... Իսկ երբ Գարսևանը մի անգամ կեսբերան հարցրեց՝ «որտեղի՞ց գիտես», Արևհատը հանգիստ պատասխանեց՝ «աչքեր չունե՞մ, ի՞նչ է»: Գարսևանն այլևս հարցեր չտվեց, որպեսզի բանի տակից բան դուրս չգար, կարծես դուրս չգալն ապացույց է այն բանի, որ բանի տակ բան չկա:

Վերջապես գալիս էր նաև Արևհատը՝ միջահասակ, գեր, սպիտակ: Նա ակնհայտորեն զվարթ էր, երևի ինչ-որ լավ բան էր կատարվել նրա հետ: Լիան երկար ու կասկածով նայում էր նրան, բայց մայրը չէր նկատում նրա հայացքը: Նստելով պատշգամբում դրված սեղանի մոտ, նա ձեռքը կոխում էր հագուստի լայն օձիքից ներս, իր մեծ ստինքների արանքից ու տակից հանում էր խառնիխուռը կերպով այնտեղ խոթած թղթադրամները՝ միաժամանակ նաև պատահաբար վեր բարձրացնելով կուրծքը, որը չէր շտապում վերադարձնել իր տեղը: Վեր քշտելով շրջազգեստի փեշերը, նա գուլպաներից մեկի միջից ևս հանում էր ծնկից վերև պահած դրամը: Մոռանալով նորից վար իջեցնել փեշերը, նա սկսում էր հաշվել և դասավորել դրամը: Իսկ հաճախ, երբ տոթ էր լինում, նա ամբողջովին էր հանում շրջազգեստը և մնում կիսամերկ: Աբգարյանների ընտանիքում նա միակն էր, որ հնարավորություն ուներ այդպես ազատ վարվելու: Հայրը քաշվում էր աղջկանից, աղջիկը՝ հորից, իսկ ումի՞ց քաշվեր մայրը:

Լիան կաթսան դնում էր էլեկտրական օջախի վրա և, սպասելով ճաշի տաքանալուն, նստում և լուռ նայում էր մորը: Այո, Արևհատն իր գեր մարմնով դեռ կարող էր շարժել շատերի, այդ թվում նաև իրենից ավելի երիտասարդների ախորժակը — մտածում էր Լիան: Կնոջ միակ դժբախտությունը նրա դեմքն էր՝ ամբողջովին կարմիր: Ինչ դեղեր և պարֆյումերիայի ինչ պիտույքներ ասես, որ չէր գործածել Արևհատն՝ ապարդյուն...

Երբ պարտեզից բարձրանում էր հայրը՝ գործն այնտեղ ավարտված և լվացված, Լիան նայում էր նրան և ակամայից համեմատում իր մոր հետ: Գարսևանն աղջկա մեջ առաջացնում էր մտերիմ կարեկցանք, համարյա խղճահարություն: Ինչպիսի նոր շալվար էլ հագներ նա, մի քանի օր հետո դրա ծնկները փուչիկ կտային, իսկ հետույքային մասը կախ կընկներ: Կստացվեր այն տպավորությունը, թե Գարսևանը քայլում է զառամյալ ծերունու պես՝ ծնկները կքած և ինքն ամբողջովին կախ-կախ:

Ոչ, այդպիսի ամուսին չէր հարկավոր Լիայի մորը: Հետաքրքիր է, ինչպե՞ս էր նա ամուսնացել հայրիկի հետ...

Սթափվելով իր մտքերից, Լիան ճաշի պատրաստություն էր տեսնում: Մայրը սեղանի վրայից հավաքում էր դրամը: Վաղը դա պետք էր տանել դրամարկղ: Ինչպես միշտ, մայրն այդ գործը հանձնարարում էր աղջկան:

Ընտանիքը նստում էր ճաշելու: Սեղանը դրված էր երկարավուն պատշգամբ-սենյակի մեջտեղում՝ նախասենյակի դռան և ճաղաշարի դռնակի միջև: Ճաշելիս Աբգարյանները նկատում էին, թե ինչպես մի երկու անգամ քարե սանդուխքի մոտով, սպիտակ ստվերի պես, սահում-անցնում էր Մուխաննաթը՝ առանց վերև նայելու, առանց կանգ առնելու և որևէ բան խնդրելու: Արժանապատվությունը թույլ չէր տալիս: Աբգարյանները գիտեին, որ եթե անգամ կանչեին նրան, նա չէր արձագանքի ոչնչով և կշարունակեր իր ճանապարհը: Արդեն իսկ իր անցնել-դառնալով նա հիշեցնում էր իր գոյության մասին և այդքանն էլ բավական էր հասկացողի համար:

Լիան սեղանի վրայից վերցնում էր հաց, մսոտ ոսկորներ, և, մոտենալով ճաղաշարին, թափում էր սանդուխքից մի քիչ այն կողմ: Նա շտապում էր վերադառնալ իր տեղը, որովհետև գիտեր, որ Մուխաննաթն ուրիշների ներկայությամբ երբեք ձեռք չի տա ուտելիքին:

Հետաքրքիր էին ուտում նաև Աբգարյաններն իրենք.— ամեն մեկն իր համար, գլուխը կախ, առանց մյուսից խնդրելու, ասենք թե, տալ իրենից հեռու գտնվող աղամանը, առանց իրար հրամցնելու համեղ կտորներ: Սեղանն առատ էր, համեղ կտորները շատ, ամեն ինչ լրիվ բավականացնում էր բոլորին: Իհարկե, եթե դա լիներ դժվար տարիներին, մայրը մեծ բաժինը կտար աղջկան, հայրն

ընդհանրապես կձևացներ, թե կուշտ է և ոչինչ չէր ուտի, աղջիկը կստիպեր, որ բոլորը հավասարապես ուտեն և այլն: Բայց հիմա կարիք կա՞ր այդ ամենին: Եվ ուտում էին ամեն մեկը յուրովի՝ ով ինչ ուզենար և ինչքան ուզենար: Ուտում էին լուռ, կենտրոնացած: Եվ եթե այդ ճաշկերույթն ուներ կենդանական տեսք, ապա գեղեցիկ-կենդանական: Տեսնել էր հարկավոր, թե ինչպիսի ախորժակ բերող ախորժակով էր ուտում լիամարմին Արևհատը՝ կարծես տասն օր էր, ինչ նշխար չէր դրել բերանը: Ավարտելով մի ուտելիքը, նա իր լիքը ձեռքը երկարում էր դեպի մի այլ ուտելիք՝ միաժամանակ հառաչելով: Բայց դա ոչ թե տխուր հառաչանք էր՝ ինչ-որ հուշի ազդեցության տակ, այլ ուղղված էր հերթական ուտելիքին և բացատրվում էր.— «ես կարծում էի, թե ավարտեցի ուտելը, բայց դու էլ ես սպասում քո հերթին. ի՞նչ արած, պիտի ուտեմ նաև քեզ»...

Լիան, մոր դիմաց նստած, ուտում էր ախորժակ չունեցողի մանրիկ կծոտումներով և ավելի մանրիկ ու դժկամ ծամումով: Թվում էր, թե նա մի փոքրիկ կենդանի է, որը մայրական կաթից կտրվելուց հետո դեռ չի վարժվել ուրիշ բան ուտելու, բայց ահա, ուր որ է կսովորի՝ իր առջևում ունենալով իր գեր մոր ակնառու օրինակը:

Իսկ Գարսևանը, չնայած իր պատվավոր տեղին՝ սեղանի գլխավերևում, մեջքով դեպի նախասենյակի դուռը, թողնում էր այն տպավորությունը, թե այդ տան մշակն է, և բարեհոգի տանտիրուհիները նրան շնորհ են արել, սեղան են նստեցրել իրենց հետ, և այժմ նա քաշվում է բան ուտելուց: Իհարկե, ուտում էր, բայց մի տեսակ թաքնվելով, թեև ոչ մեկը չէր էլ նայում նրան:

Աբգարյաններն ուտում էին լուռ, և միայն հասնելով մրգին՝ ձմերուկին, խաղողին կամ դեղձին — բոլորն էլ իրենց պարտեզից — սկսում էին խոսել:

— Էսօր մեզ մոտ նոր Հովսեփյան եկավ աշխատելու:

Մայր ու աղջիկ, միրգը բերանների մոտ կամ բերաններում, կտրուկ ընդհատում էին ուտելը, կտրուկ նայում էին իրար, բարձր ծիծաղում, և Արևհատը հարցնում էր.

— Ինչո՞ւ են փոխել: Էն է՝ ունեինք Հովսեփյան:

Գարսևանը մի պահ մտածում էր և ծանրակշիռ բացատրում.

— Էն Հովսեփյանը Կարապետյան էր, իսկ սա՝ Ղազարյան...

Մայր ու աղջիկ ավելի բարձր էին ծիծաղում, իսկ հայրը, արդեն բարկացած, ասում էր.

— Հովսեփյան՝ այսինքն դիրեկտոր: Ի՞նչ է, չե՞մ հասկանում էդքանը:

Նորից էին ծիծաղում, բայց ավելի զուսպ՝ այլևս չբարկացնելու համար տղամարդուն: Ապա Լիան հանկարծ տխրում էր և հայտնում իր նորությունը.

— Էսօր մի տատիկ դրամի կեսը կորցրել էր ճանապարհին: Երբ ասացինք իրեն, որ պակաս է, սկսեց խնդրել, աղաչել, որ ընդունենք որպես լրիվ, ինքն ի՞նչ մեղավոր է, որ կորցրել է: Քիչ մնաց, որ ինքս տայի գրպանիցս: Բայց Անժիկն ասաց՝ «Էդ էր պակաս, աղջի. դրա տղան ինժեներ է. իսկ հարսը՝ բժշկուհի, ես նրանց ճանաչում եմ, քու կշռի չափ փող են աշխատում»: Ասացի՝ «Դա չէ բանը, կարող են բարկանալ տատիկի վրա»: Ասում է՝ «Է, թող մի փոքր էլ բարկանան, նա հո դրանից տուբերկուլոզ չի՞ ընկնի»:

Արևհատը ժպտում էր.

— «Տուբերկուլոզ»՝ Արտյուշան ասում է նիհար կանանց մասին...

Ճաշից հետո մայր ու աղջիկ լվանում էին ամանեղենը, և ամեն մարդ զբաղվում էր իր գործով: Հայրը նորից շտապում էր պարտեզ, մայրն զբաղվում էր իր ավելի և ավելի նեղացող հագուստները լայնացնելով կամ այլ գործերով, իսկ Լիան պառկում էր իր զով անկողնի վրա, ծնկներն ու թևերը մերկ, ամբողջ մարմնով բավականությամբ տրվելով ետկեսօրյա զով քամու թույլ պոռթկումներին: Գլուխը թևին կռթնած, նայում էր արևոտ այգուն, որը դեռ շոգ էր տակետակ: Նայում էր և, ինքն էլ չիմանալով, թե երբ և ինչպես, քնում: Կարդալ նա չէր սիրում և գրքեր էլ չուներ: Թերթեր ևս, նրանք չէին ստանում, այլ գնում էին երբեմն, երբ նրանց ասում էին, որ այնտեղ «հետաքրքիր բան կա տպած»:

Լիան արթնանում էր հանկարծ, և, տեսնելով, որ բավական մթնել է, ձայն էր տալիս վախեցած, կարծես նա բոլորովին մենակ էր մնացել այդ գեղեցիկ, բայց անմարդ փոքրիկ աշխարհում:

— Մայրի՜կ, հայրի՜կ...

— Ի՞նչ պատահեց քեզ,— լսվում էր մոր ձայնը պատշգամբի մյուս ծայրից: Նա էլ էր պառկել իր անկողնու վրա՝ հանգստանալու:

Լիան վեր էր ցատկում տեղից և, քանի դեռ լրիվ չէր մթնել, գնում էր իր հաշիվներն ավարտելու փայտե այն տնակի հետ, որը կանգնած էր պարտեզի ամենախորքում, դրա ետին պարսպի և պետական այգու պարսպի անկյունում: Դա ամենածանր գործն էր Լիայի համար: Մթության մեջ պարտեզը խորհրդավոր էր ու վախեցնող, ճյուղերի, տերևների ու խոտերի ամեն մի հպումը սարսափ էր պատճառում նրան, ամեն քայլափոխին նա սպասում էր ընդհարվել դարանակալած որևէ մարդու կամ այլ էակի հետ: Նրան թվում էր, թե հարազատ Մուխաննաթն անգամ, այդ մթության մեջ փոխել էր իր բարքը և ուր որ է հարձակվելու էր Լիայի վրա և հոշոտելու նրան: Դեռ սրանից երկու տարի առաջ, արդեն քսանմեկ տարեկան, Լիան մոր ուղեկցությամբ էր կատարում այդ վտանգավոր ճանապարհորդությունը:

Նախապես վառելով պատշգամբի կենտրոնում կախված էլեկտրական լամպը, նա այժմ հեռվից, պարտեզի խորքից, որպես փարոսի էր նայում դրան, և արագ-արագ, չանգռվելով ու քերծվելով ճյուղերից, վերադառնում էր և շունչ առած շրմփում իր մահճակալի վրա:

Շուրջը բացարձակ լռություն՝ չհաշված ծղրիդների ծղրտոցն ամբողջ գիշեր և Երևան—Սևան երկաթուղով անցնող գնացքի ձայնը՝ խուլ ու հեռու:

Եվ՝ բացարձակ խավար, որը շրջապատել էր պատշգամբը բոլոր կողմերից՝ պարտեզից, փակ սենյակների լուսամուտներից...

Ներքևում տարածված մեծ քաղաքից բացարձակապես կտրված մի փոքրիկ աշխարհ... Միակ կապը քաղաքի հետ՝ էլեկտրոլարերը, որոնցով գալիս էր ամենափրկիչ լույսը...

Լիան չէր էլ պատկերացնում, թե ինչպես նա կարող է ամուսնանալ, փոխադրվել իր ամուսնու բնակարանը՝ ծնողներին թողնելով այստեղ ավելի մենակ: Ոչ, ով որ ուզում է ամուսնանալ Լիայի հետ՝ թող ինքը գա ապրի այստեղ...

Եվ սկսում էր ամենագեղեցիկ, ամենալավ երազանքը՝ առողջ և անվախ մի երիտասարդ՝ այս տանը...

Բայց Լիան երբեք չի ամուսնանա, այդպես է երևում...

Հատակի վրա լսվում էր ոտքերի փափուկ թմբթմբոց: Արևհատը, բարեկազմ ոտքերով, թեև հաստ, բոբիկ մոտենում էր էլեկտրական լույսի կոճակին, բայց զարմացած հարցնում.

— Դեռ չե՞ս հանվել, Լիա:

Լիան երկու-երեք կտրուկ շարժումով պոկում էր հագուստն իր վրայից. նետում աթոռի վրա, սահում վերմակի տակ և ծածկվում մինչ կզակը: Մայրը, կոճակի մոտ սպասողական կանգնած, բարձրացնում էր իր փափլիկ թևը, և պատշգամբը կորչում էր մթության մեջ: Բոբիկ ոտքերի թմբթմբոցը հեռանում էր, ապա լսվում էր երկաթե մահճակալի ճռինչը կնոջ գեր մարմնի ծանրության տակ: Պառկելով երեսը դեպի պատը դարձրած և արդեն քնած ամուսնու կողքին, գրավելով լայն մահճակալի երեք քառորդը, Արևհատը վայրկենապես քնում էր հոգնավաստակ կնոջ առողջ քնով:

Լույսը հանգելուց մի պահ անց սկսում էին երևալ երկնքով մեկ շաղ եկած աստղերը: Լիան նայում էր դրանց և նրա աղջկային ոչ թախծոտ, այլ կենսուրախ երևակայությանը պատկերանում էր, թե դրանք բոլորը մի-մի հովսեփյաններ էին, որոնք հերթականորեն գնալու էին կարի գործարան: Նա բարձր քրքջում էր, բայց ծնողները չէին լսում դա, որովհետև այդ քրքիջն իրական չէր, այլ արդեն քնի մեջ: